ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՏԱՐՈՆԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ (1916-1917 թթ.)

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան Թուրքիան շարունակում էր իրականացնել հայերի ցեղասպանությունը: Երկու տարվա՝ 1914–1915 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանի բնակիչների մեծ մասը՝ ավելի քան 1.5 մլն մարդ հայրենազրկվել և սպանվել էին:

1916 թ. փետրվարի 3-ին գեներալ Ֆ. Ի. Նազարբեկովի (Թովմաս Նազարբեկյան) Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիան և նրա կազմում Անդրանիկի հրամանատարության ներքո գործող Հայկական 2-րդ կամավորական խումբը ազատագրեցին Մուշ քաղաքը: Տեղեկանալով այդ մասին՝ լեռներում թաքնված և հրաշքով փրկված հայերի փոքրաթիվ խմբեր, հիմնականում՝ կանայք ու երեխաներ, վերադառնում են Մուշ:

Ֆ. Նազարբեկովի հուշերի համաձայն՝ Մուշում մնացել էին մոտ հիսուն հայ ընտանիք, հիմնականում արհեստավորներ: Մնացած հայ բնակչությունը սրի էր քաշվել[1]: Թուրք բնակչության մի մասը շարունակում էր բնակվել քաղաքում: Հաջողվում է Մուշի շրջակա գյուղերում գտնել ողջ մնացած 70 հայ կին և երեխա, որոնց տեղափոխում են Խնուս[2]:

Մուշի հայկական թաղամասը գրեթե ամբողջությամբ ավերվել և կողոպտվել էր: Ս. Մարինեի թաղամասում գտնվող առաջնորդարանի շենքն իր հարակից շինություններով և տներով ամբողջությամբ գետնին էր հավասարեցվել: Մատնության հետևանքով, թուրքերը Գասպար աղա Ջուլիկյանի տնից հայտնաբերում են այնտեղ թաքցրած՝ Ս. Առաքելոց վանքի ոսկե և արծաթե անոթները և այլ իրեր: Թուրքերը կարողացել են հայտնաբերել մի քանի թաքստոցներ ևս ու այնտեղ գտնվող եկեղեցական իրերը յուրացնել[3]:

Ստանալով ռուսական հրամանատարության թույլտվությունը՝ Մուշ են մեկնում Կովկասում գործող հայկական և ռուսական հասարակական և բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես, օրինակ՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերության (ԿՀԲԸ) կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի, Եղբայրական օգնության և Համառուսաստանյան քաղաքների միության (Քաղաքների միություն) կովկասյան բաժանմունքի լիազորներն ու խմբերը: Քաղաքների միության լիազոր Ռ. Տեր-Մինասյանի և ԿՀԲԸ Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գր.

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 13 շրջ.:*

[2] *«Վան-Տոսպ» (Թիֆլիս), 14. II. 1916, էջ 16:*

[3] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 132, թ. 69 շրջ.-70:*

Ղամարյանի համատեղ ջանքերով Խնուսի մոտ հիմնվում է որբանոց[4]: Միաժամանակ Խնուսում և նրա մոտ գտնվող Արոս գյուղում հիմնվում են սննդակայաններ: Մուշից եկողները նշված հաստատություններում երկուսից երեք օր հնարավորություն են ունենում հանգստանալու, սնվելու, ապա, ուտելիքի պաշար վերցնելով, շարունակելու իրենց ճանապարհը:

Հայկական կենտրոնական կոմիտեն Մուշ է ուղարկում Կարո Սասունուն[5]: 1916 թ. մարտի սկզբին նրա գլխավորած խումբը, որը բաղկացած էր Արմենակ Սասունուց և Հմայակ Մանուկյանից[6], Իգդիրից ժամանում է Մուշ:

Անգլիական հայանպաստ կազմակերպությունները նախատեսում են Խնուս-Մուշի շրջան ուղարկել բուժօգնություն, սակայն դա չի իրագործվում, հավանաբար հաշվի էր առնվել ռազմաճակատի անկայուն դրությունը և անապահով վիճակը:

1916 թ. մարտի վերջերին Մուշ է հասնում ԿՀԲԸ Հայկական կենտրոնական կոմիտեի բժշկասանիտարական խումբը: Այն կազմված էր մեկ բժշկից, մեկ բուժակից, երկու վարակաբանից[7]:

1916 թ. մարտի 29-ին Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան բաժանմունքի գլխավոր կոմիտեում լսվում է Քաղաքների միության Խնուսի գործակալ, հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ Ռոստոմի (Ստեփան Զորյան) զեկուցումը: Նա հայտնում է, որ Խնուսում և Մուշում օրեցօր ավելանում են քրդական գերությունից փախած և ողջ մնացած հայեր: Զգալի թվով հայեր դեռ գտնվում էին քրդերի մոտ: Բացվել են որբանոցներ: 15 օրվա ընթացքում եկածների թիվը հասնում է 1500 հոգու: Ինչպես հաղորդում է Ռոստոմը՝ «ոչխար, եզներ, սերմացու շատ էժան են, հագուստ կա, պակասում է թեյ և սպիտակեղեն»[8]:

1916 թ. մարտի 30-ի հեռագրում Կարո Սասունին Հայկական կենտրոնական կոմիտեին հաղորդում է, որ Խնուսում գտնվում են երկու հազար փախստական: Միաժամանակ շարունակվում է ողջ մնացած հայերի հոսքը Մուշի և Խնուսի շրջաններից[9]:

Մարտի վերջերին կաթողիկոս Գևորգ Ե-ի հրամանով Մուշ ժամանած հանձնաժողովի[10] անդամներից Խ. Փանոսյանի տեղեկության համաձայն, Մշո շրջանի հայ բնակչության թիվը հասնում է մոտ ինը հազարի:

---

[4] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 48:*

[5] *Կ. Սասունու մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Ն ե ր ս ի ս յ ա ն. Կարո Սասունի, Երևան, 2004: Կ. Սասունու զեկուցագրերը տե՛ս Ռ. Ս ա հ ա կ յ ա ն. Արևմտյան Հայաստանի վերաշինության խնդիրը. Կարո Սասունու զեկուցագրերը Տարոնի հայության վիճակի մասին.– «ՎԷՄ», IV-VI, 2010, էջ 185-199:*

[6] *«Աշխատանք» (Երևան), 28. IX. 1916:*

[7] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 76:*

[8] *«Արև» (Բաքու), 4. IV. 1916:*

[9] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 404, թ. 257: «Հորիզոն» (Թիֆլիս), 3.IV.1916:*

[10] *Հանձնաժողովի անդամներն էին՝ Իսահակ սարկավագ Տեր-Ղազարյանը, Գևորգյան ճեմարանի տեսչի օգնական Ա. Տեր-Պողոսյանը, նույն ճեմարանի ուսուցիչ Բ. Բահադրյանը և Էջմիածնի Եղբայրական օգնության կոմիտեի բժիշկ Խ. Փանոսյանը (Սանֆան): Այն պետք է ոչ միայն նվերներ բաժաներ ռուս զինվորներին և հայ կամավորներին, բժշկական հետազոտություն կատարեր, այլև այցելեր վանքերն ու եկեղեցիները և գաղտնարաններից հաներ ու Էջմիածին տեղափոխեր եկեղեցական զանազան իրերը և ձեռագրերը: Հանձնաժողովի ուսումնասիրությունները բացահայտում են թուրքական իշխանությունների կողմից հայ առաքելական եկեղեցուն պատկանող գույքի գրեթե համատարած կողոպուտն ու ավերումը: Հաջողվում է գաղտնարաններից գտնել մի շարք իրեր, որոնց թվում էին մագաղաթե ինը ձեռագիր, ինչպես նաև Հեթում թագավորի ավետարանը: Դրոյի մարտիկները հանձնաժողովին են հանձնում պատահաբար գտնված 30 ձեռագիր (տե՛ս «Վան-Տոսպ» 12. VI. 1916, էջ 7-8), Կ. Ս ա ս ո ւ ն ի. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918). Թրքահայոց գաղթաշարժերը և անոնց դերը՝ Հայաստանի Հանրապետության կազմության մեջ, Բեյրութ, 1966, էջ 121-122: Մշո Ս. Կարապետ վանքում բացի ձեռագրերից և դասագրքերից կային 1400 կտոր գրքեր: Դեռևս 1911 թ. Էջմիածնի միաբան Սահակ ծայրագույն վարդապետ Աստվածատրյանը սկսում է կարգավորել մատենադարանը: Նրա*

1916 թ. գարնանը Մուշ է գալիս Քաղաքների միության ներկայացուցիչ, հասարակական-քաղաքական գործիչ, լրագրող, մասնագիտությամբ գյուղատնտես Աշոտ Աթանասյանը: Նա 1916 թ. մայիսի 4-ին գեներալ Ֆ. Նազարբեկովին ուղղված նամակում հայտնում է Մուշ քաղաքից և շրջակա գյուղերից ստացած տպավորությունների մասին: Ա. Աթանասյանն իր գործընկերների հետ այցելել է յոթից ութ գյուղ: Կատարած վիճակագրությունից հետևում է, որ յուրաքանչյուր գյուղում բնակվում են 100 - 150 հոգի՝ զրկված նույնիսկ հացից: Գյուղատնտեսը խնդրում է գեներալին հնարավորության դեպքում հոգալ փախստականների նվազագույն կարիքները:

Ա. Աթանասյանի հաշվարկների համաձայն՝ Մուշի հայ բնակչությունը չորս հազարից ավելի է: Նրանց պարենը սպառվելու վրա է: Բացի այդ, սկսել են տարածվել զանազան հիվանդություններ, նկատվել են նաև խոլերայի դեպքեր[11]: Հիվանդության տարածմանը նպաստում է կենցաղային տարրական պայմանների և հիգիենայի պարագաների բացակայությունը: Հիմնվում է խոլերայով հիվանդների համար առանձին մեկուսարան-բարակ: 34 հիվանդից մահանում են 19-ը[12]: Դիմում է արվում ռուս-թուրքական ռազմաճակատում փախստականների խնդրով զբաղվող գլխավոր լիազոր գեներալ Վ. Մ. Թամամշևին (Թամամշյան) և Քաղաքների միությանը՝ օժանդակելու Խնուս-Մուշ շրջանի բնակչությանը «բժշկական օգնությունը լայն կազմակերպելու համար»[13]:

Հունիսին Ա. Աթանասյանը Քաղաքների միության բաժանմունքի գլխավոր կոմիտեին ներկայացնում է Մշո դաշտի բնակավայրերում կատարած ուսումնասիրությունները: Դաշտի 93 հայկական գյուղերից կանգուն էր մնացել 17-ը: Մնացածները կողոպտվել, հրդեհվել կամ քարուքանդ են արվել: Նախնական հաշվարկի համաձայն, հասցված վնասը կազմել է մոտ 300 միլիոն ռուբլի[14]:

Գեներալ Ֆ. Նազարբեկովի վկայությամբ, Մուշում ամենածանր խնդիրը՝ պարենի հայթայթումն էր: Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի

մեկնելուց հետո այդ աշխատանքը շարունակում է ուսուցիչ Մակար Ղարախանյանը: Մատենադարանին գրքեր նվիրել է կաթողիկոսը՝ 60 կտոր, Ս. Կանայանցը, Ս. ծայրագույն վարդապետ Աստվածատրյանը՝ 315 և «Կարնո Ազգ. վարժարանոցի վերատեսուչ պ. Ռոստոմ Զորյանը 44 կտոր գիրք» (տե՛ս «Դայլայլիկ» (Կ. Պոլիս), 12/25. III. 1914: Մշեցի Սուրեն Սահակյանը հայտնում է մեկ այլ թաքստոցի մասին, որը գտնվել է Վերին թաղի Ս. Հարություն եկեղեցում: Այնտեղ պահվել է 125 ձեռագիր գիրք, երկու Աստվածաշունչ և եկեղեցական այլ պարագաներ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 132, թ. 13):

[11] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 68:*

[12] *Նույն տեղում, թ. 77:*

[13] *«Համբավաբեր» (Թիֆլիս), 13. III. 1916, էջ 372:*

[14] *Ռ. Սահակյան. Աշոտ Աթանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում.– «Բանբեր Հայաստանի արխիվների», 2007, -1-2, էջ 47:*

համբարակային ծառայությունը քաղաքում և շրջակայքում տեղակայված զորամասերին գրեթե ոչինչ չէր ուղարկում: Հրամանատարությանն ուղղված բոլոր դիմումները մնում են անպատասխան: Զգացվում էր հացի սուր ճգնաժամ: Գեներալը ցավով նշում է, որ իր ունեցած սուղ միջոցները հնարավորություն չեն տալիս թեկուզ ամենաչնչին օժանդակություն ցույց տալ տառապյալներին: Այդ դժվարին պահին Ֆ. Նազարբեկովին է դիմում Ռոստոմը՝ հետևյալ առաջարկով. նա խնդրում է իրեն տալ զինվորներ՝ պաշտպանության համար, որպեսզի լքյալ գյուղերում խուզարկեն և գտնեն հորած ցորենի պաշարները: Գեներալը համաձայնում է միայն պայմանով, եթե գտնվածի կեսը տրվի բանակին: Նման համագործակցությունը հնարավորություն է տալիս և՛ զորքին և՛ հայերին ապահովել հացով[15]:

Ինչպես նշել էինք, քաղաքում մնացել էր զգալի թվով թուրք բնակչություն: Հակառակ թուրք պատմագրության պնդումներին, նրանց նկատմամբ լայնածավալ բռնության դեպքեր չեն եղել: Տեղի են ունեցել միայն մի քանի սպանություններ: Այնուամենայնիվ, թուրք բնակչությունը շարունակում էր ապրել իր տներում և հայ գաղթականների նման գտնվում էր նյութական և սոցիալական ծանր կացության մեջ: Այդ ամենը հարկադրում է գեներալ Ֆ. Նազարբեկովին դիմել Ռոստոմին՝ խնդրելով շտապ օգնություն ցուցաբերել ոչ միայն հայ գաղթականներին, այլև թուրքերին[16]:

Մուշի և դաշտի հայությանն անհրաժեշտ էր պահել տեղում, նրանց համար ստեղծելով նվազագույն տանելի պայմաններ: Կաթողիկոս Գևորգ Ե-ի հրամանով Կ. Սասունուն հունիսին տրվում է երկու հազար ռուբլի ցորեն գնելու համար[17]:

1916 թ. ապրիլից մինչև հուլիս Կ. Սասունին բնակչության համար գնել է երեք հազար ռուբլու ցորեն և գրլգրլ (կորեկ), որը տրվում էր կարիքավոր բնակչությանը[18]: Սակայն պարենը խիստ անբավարար էր և Կ. Սասունին հեռագրում է Հայկական Կենտրոնական կոմիտեին՝ արագացնելու օգնությունը, քանի որ «Փախստականների մեծ մասը ներկայումս ենթակա է սովի»[19]: Նրա գնահատմամբ, առկա ցորենը բավարարելու էր միայն երկու ամիս: Կ. Սասունին հույս ուներ, որ մինչ այդ հացահատիկը կհասնի և հնարավորություն կլինի բնակչությանը որոշ չափով ապահովել հացահատիկով, քանի որ ցանվել են արտերի մի մասը: Իրադրությունը կարելի էր շտկել, եթե Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատարությունը թույլատրեր հավաքել հասած ցորենը, որը հնարավորություն կտար տասը հազար գաղթականությանը հինգ ամիս հացով ապահովել: Սակայն կար նաև մի խնդիր՝ ռուսական զորքն իր կարիքների համար էր հնձում ցորենը, բռնագրավում եզներ ու կովեր: Ողջ շրջանում մոտ հազար եզ կար: Կ. Սասունին գտնում էր, որ լծկանների այդ թվաքանակը շատ քիչ է

[15] *ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 19 և շրջ.:*
[16] *Նույն տեղում, ֆ. 45, ց. 1, գ. 23, թ. 26:*
[17] *«Հորիզոն» (Թիֆլիս), 9. VI. 1916:*
[18] *ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 153, թ. 6 շրջ.:*
[19] *«Համբավաբեր», 24. VII. 1916, էջ 941:*

երկրագործական աշխատանքներ կատարելու համար, այնուամենայնիվ ուրախ կլիներ, եթե այդքանն էլ մնա: Բանն այն է, որ հրամանատարությունն ուշադրություն չէր դարձնում իրենց բողոքներին և անհրաժեշտության դեպքում շարունակում էր բռնագրավումները[20]: ԿՀԲԸ Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Ա. Շարաֆյանը տրամադրում է 3500 ռուբլի՝ գումակի համար ձիեր, եզներ և սայլեր գնելու համար[21]:

Ինքնին հասկանալի է, որ զորքը ստիպված էր այդ քայլին դիմել, քանի որ իր թիկունքային և համբարակային ծառայությունները գործում էին խիստ անկանոն: Նշված հիմնախնդիրը հնարավոր էր լուծել, եթե համապատասխան պայմանները ստեղծվեին տեղերում հայ բնակչության համար և թույլատրվեր նրանց ազատ զբաղվել հողագործական աշխատանքներով:

Հավանաբար այդ ամենը հասկանալով՝ Կ. Սասունին ձեռնամուխ է լինում սեփական գումակի կազմակերպմանը: Այդ կերպ նա հավաքում է 42 եզ, որոնք ավելի պիտանի էին տեղանքի առումով[22]: Մուշի և շրջանի բնակչությանը որոշ չափով պարենով ապահովելու նպատակով Կ. Սասունին նախաձեռնում է հացահատիկի գնում: 1916 թ. հունիսի 10-ից մինչև հուլիսի 23-ը նա գնել և բնակչությանը բաժանել է 350 փութ ցորեն ու 1300 փութ գրլգրլ[23]: Բնակիչներից յուրաքանչյուրին տրվել է մեկական փութ, իսկ որոշ դեպքերում էլ պակաս, քանի որ նրանք ունեին բավարար քանակությամբ գրլգրլ[24]:

Ռուսական հրամանատարության հետ ունեցած բանակցությունների ընթացքում հնարավոր է լինում հավաքել լքյալ արտերի հացահատիկը: Հացահատիկի հավաքումը կազմակերպելով, հնարավորություն է ստեղծվում հացով ապահովել ոչ միայն քաղաքի բնակչությանը, այլև բանակին: Պահեստավորվում է մեծ քանակությամբ ցորեն և գրլգրլ: Սակայն պահեստները գտնվում էին Մուշից 30-ից 50 վերստ հեռավորության վրա: Այդ իսկ պատճառով պետք է ունենալ սեփական կամ վարձով գումակ, որպեսզի հացահատիկը պահեստներից բերվի և կենտրոնացվի որոշակի տեղում: Կ. Սասունին, ԿՀԲԸ կողմից տրամադրած գումարի մի մասն օգտագործելով, գյուղացիներից գնում է 4508 փութ ցորեն և 1755 փութ գրլգրլ: Բացի այդ, 5300 գաղթականի տրվել է 4038, որբանոցին 200, հիվանդանոցին 200 փութ ցորեն: Պահեստում մնում է 200 փութ: Կարիքավորներին տրվել է 489 փութ գրլգրլ[25]:

Կ. Սասունու խումբը կատարում էր կարևոր մի աշխատանք ևս՝ քրդական գերության և ստրկության մեջ գտնվող հայրենակիցների ազատագրումը: Դա կատարվում էր կամ բանակցությունների, կամ փրկագնման,

---

[20] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 62:*

[21] *«Համբավաբեր», 24. III. 1916, էջ 372:*

[22] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 62:*

[23] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 68: Ինչպես նշում է Խնուսում Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գր. Ղամարյանը, «Մշի ժողովրդի գաղթի տխուր հեռանկարը մեզ հանգիստ չէր տալիս, մենք ամբողջովին զբաղված էինք գաղթականներին ճանապարհին հացով ապահովելու խնդրով» (ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 50 և շրջ.):*

[24] *ՀԱԱ, ֆ. 1451, ց. 1, գ. 153, թ. 6 շրջ.:*

[25] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 58-59:*

կամ էլ զենքի ուժով: Այդ նպատակով Կ. Սասունուն է տրվում կանխիկ գումար կամ ոսկեղրամ՝ տառապյալներին փրկագնելու համար[26]: Հնարավոր է լինում մեկ ոսկու դիմաց ազատել 16–20 հոգու: Տարբեր ճանապարհներով հնարավոր է լինում Մուշ – Խնուս – Սասուն շրջանում փրկել վեց հազար հոգու[27]:

Խնուսում Կ. Սասունին առաջարկում է տեղի ռուսական հրամանատարությանը՝ հանձին գեներալ Զ. Ա. Մղիվանիին, թույլատրել հայերից կազմել աշխարհազորային - ինքնապաշտպանական խմբեր՝ միլիցիա: Նրանք ոչ միայն կպաշտպանեին բնակչությանը քրդական հարձակումներից, այլև կիրականացնեին ռուսական բանակի հաղորդակցության ուղիների հսկումը և կհետախուզեին հակառակորդի դիրքերը: Սակայն գեներալ Մղիվանին թույլատրում է զբաղվել զուտ գաղթականական գործերով: Ի բարեբախտություն, Մուշի կայազորի պետը գնդապետ (հետագայում գեներալ) Մ. Բ. Միլիկովն (Միլիկյան) էր, որի գունդը գտնվում էր գեներալ Ֆ. Նազարբեկովի հրաձգային 2-րդ դիվիզիայի կազմում: Կ. Սասունու վկայությամբ՝ ինքը գնդապետ Մ. Բ. Միլիկովի խորհրդով դիմում է 16-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ Ի. Վ. Սավիցկուն[28]: Նրա անմիջական օգնությամբ Կ. Սասունին ստանում է բավարար քանակությամբ զենք, զինամթերք, հագուստ և պարեն[29]:

Մշեցիները և սասունցիները կազմակերպում են խուզարկու խմբեր: Նրանցում ընդգրկվում են 300-ից ավելի երիտասարդներ: Դրանք քրդական շրջաններից ազատում են հայերին: Խմբերի ներկայությունը շատ դեպքերում զսպում է քրդերին հարձակողական գործողություններից: Բացի այդ, նրանք իրականացնում էին հետախուզություն՝ ռուսական հրամանատարությանը հաղորդելով արժեքավոր տեղեկություններ: Մուշում և շրջանում գործող մարտական խմբերից էր Արշակ Բոլեյանինը: Նրա և Սասունցի Մանուկի խմբերը կռիվներ են մղել քրդական տարբեր ջոկատների դեմ: Հայ մարտիկներն իրենց կեցությունն ապահովում են քրդերից խլված ավարով, որը բավական էր նրանց գոյությունը պահպանելու համար: Բացի այդ, Սասունցի Մանուկի խումբը իր ռազմավարի կեսը հանձնել է Կովկասյան 6-րդ հրաձգային գնդի համբարակային ծառայությանը[30]: Ինչպես նշում է Կ. Սասունին ԿՀԲԸ Հայկական կենտրոնական կոմիտեին ուղղած զեկուցագրում, «...խմբերն ամբողջ ժամանակաշրջանում որևէ նյութական օգնություն մարմիններից ստացած չեն, բացի բարոյական աջակցությունից, այն է՝ հարաբերության մեջ մտնել զինվորական իշխանության հետ, փաստաթղթեր ստանալ և զանազան դյուրություններ ունենալ երթևեկության և տեղափոխությունների համար»[31]: Ինքնին հասկանալի է, որ վերադասին ուղղած նամակում Կ. Սասունին պետք է

---

[26] *ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 153, թ. 6:*

[27] *Նույն տեղում:*

[28] *Գեներալ Ե. Վ. Մասլովսկու հուշերի համաձայն, Ի. Վ. Սավիցկին 66-րդ հետևակային դիվիզիայի պետն էր: Տե՛ս* Е. В. М а с л о в с к и й. Мировая война на Кавказском фронте 1914–1917 г. Стратегический очерк. Париж, 1933, с. 11.

[29] *Կ. Ս ա ս ո ւ ն ի. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 120-121:*

[30] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 66:*

[31] *«Համբավաբեր», 2. X. 1916, էջ 1257-1258:*

թաքցներ այն հանգամանքը, որ խմբերը գործում են իրենց անմիջական ենթակայության ներքո: Կարելի է ենթադրել, որ դա արվում էր, որպեսզի ռուսական իշխանությունները չկարողանան տեղեկանալ հայկական խմբերի իրական նպատակների մասին: Այդ էր պատճառը, որ Կ. Սասունին հարկ է համարում ընդգծել, որ իրենք որևէ կապ չունեն մշեցիներից և սասունցիներից կազմակերպված մարտական խմբերի հետ:

Սասունցի Մանուկի ղեկավարությամբ կազմված 100 հոգուց բաղկացած ջոկատը, մի շարք կռիվներ մղելով, ազատում է մեծ թվով հայերի: 1916 թ. ապրիլի սկզբներից ջոկատը կատարել է երկու արշավանք և գերությունից ազատել է 2500, իսկ հաջորդ երեքի ընթացքում՝ 770 հոգի: Ընդհանուր առմամբ, նրանք կարողացել են Մուշ բերել 3270 հոգու[32]: Մայիսին հաջողվում է Տարոնի տարբեր վայրերից հավաքել մոտ երկու հարյուր որբերի և ուղարկել Ալեքսանդրապոլում գտնվող որբանոցը[33]:

Սասունցիների հավաքած տեղեկության համաձայն, քրդերի մոտ, գերության մեջ, գտնվում էին մոտ չորս հազար սասունցիներ, որոնք զրկված են գոյության ամենատարրական միջոցներից: 1916 թ. մայիսի 13-ին կաթողիկոսին ուղղված նամակում, առաջարկվում է «գումար փութացնել հոս (Մուշ, որ – Ռ. Ս.*) ղրկվի քրդերին նվեր և ազգակիցներուն հացի գին, որ կարողանան քալել և վստահելի քուրդ ցեղապետների միջոցով ազատվել»[34]: Սասունից 160 տղամարդու հաջողվում է հասնել Մուշ[35]:*

Ինչպես նշում է Կ. Սասունին, «Տարոնի բոլոր գավառներու մեջ ծվարած հայությունը թուրքերու և քրդերու դեմ կյանքի ու մահվան պայքարի մը բռնված էր: Թիկունքային պատերազմ մըն էր այդ, որ տեղի կ՚ունենար երկու նպատակով. առաջին՝ հայացնել *(ընդգծումը հեղինակինն է) Տարոնը, և երկրորդ՝ ջլատելով թշնամիի տարրերը, ապահովել հայության թիկունքը: Ապահովության այս աշխատանքը ռուսական բանակի գործին ալ կուգար: Սակայն ռուսական զինվորական իշխանությունը շատ հաճախ արգելքներ կը հարուցեր ու կը խափաներ կենսունակ ուժերու գործունեությունը: Ժողովուրդը ընտելացեր էր ընել այնքա՛ն, որքան կարելի էր, և շահել այնքա՛ն, որքան կարելի էր անմիջապես շահել»[36]:*

Մուշ և շրջան բերվող պարենը քիչ էր բնակչության կարիքը բավարարելու համար: Այդ պատճառով կազմակերպվում են խմբեր, որոնք հեռավոր գյուղերում փնտրում էին թաքցրած ցորենի պաշարները և բերում Մուշ: Սասունցի Մանուկի և Արշակ Բոլեյանի խմբերը հաճախ ուղեկցում են բնակիչներին, քանի որ մի շարք շրջաններ վտանգավոր էին: Երբեմն գործողությանը մասնակցում են ռուս զինվորականները, որոնք հայկական խմբերի հետ պաշտպանում էին բնակիչներին: Այդ օգնության դիմաց զինվորականները ստանում են գտնված ցորենի կեսը:

Խմբապետ Մարտիրոսի, Սասունցի Մանուկի հրամանատարության ներքո գործող խմբերը կարողանում են բերել 7200 փութ հացահատիկ՝ ցորեն

[32] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 65:*
[33] *ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 7, թ. 73:*
[34] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 131, թ. 7:*
[35] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 404, թ. 252:*
[36] *Կ. Ս ա ս ո ւ ն ի. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 124:*

և գըլգըլ[37]: Իրենց հերթին քրդերն են վերսկում հարձակումները՝ աշխատելով թույլ չտալ հայերին հիմնավորվել հայրենի օջախներում: Նման հարձակումները նպատակ ունեին նաև խուճապ սերմանել հայ բնակչության շրջանում: Այսպես՝ մայիսի 29-ի գիշերը քրդերը հարձակվում են Մանազկերտից եկող հայերի վրա, որոնք պատրաստվում էին ճանապարհին հիմնել սննդատու կայաններ: Հայերից մեկ հոգի սպանվում է[38]: Բացի այդ, քրդերը հարձակվում են Խնուս գնացող 13 հայերի վրա և խլում բոլոր բեռնակիր կենդանիները:

Հակառակորդի դեմ ուղղված ոչ բոլոր արշավանքներն էին հաջողությամբ ավարտվում: Դրանցից մեկի ժամանակ հայկական ստվար մի խումբ, որ կազմված էր սասունցիներից և Մշո դաշտի չխուրցիներից, շրջապատվում են հակառակորդի կողմից: Անհավասար մարտում զոհվում են 40 հոգի[39]: Յ. Զավրիևին (Հակոբ Զավրիյան) ուղղված նամակից տեղեկանում ենք, որ հարձակումն իրականացրել է քուրդ ցեղապետ Մուսա բեկն իր 500 ձիավորներով[40]:

Շարունակվում են աշխատանքները քրդերի մոտ գերության մեջ գտնվող հայերին ազատելու համար: Թիֆլիս Անդրանիկի անունով հեռագիր է ստացվում: Հեռագիրն ուղարկել էին Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան), Սեպուհը (Արշակ Ներսիսյան) և Սմբատը (Սմբատ Բորոյան): Նրանք հայտնում են, որ քրդերի մոտ պատանդ պահվող չորս հազար սասունցիներին ազատելու համար հարկավոր է տաս հազար ռուբլի:

Տեղեկանալով այս մասին, հայ փախստականներին աջակցող միացյալ կոմիտեն որոշում է պահանջված գումարը գեներալ Վ. Մ. Թամամշևի միջոցով փոխանցել Վան՝ օկրուգի պետ փոխգնդապետ Ա. Ի. Տերմենին, որպեսզի նա դրամը հանձնի ըստ պատկանելության[41]:

ԿՀԲԸ Հայկական կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Ալեքսանդր Շարաֆյանը Կ. Սասունուն է հանձնում երեք հազար ռուբլի՝ քրդերի մոտ պահվող հայերին փրկագնելու համար[42]:

Հավանաբար, հայերից կազմված մարտական խմբերի ակտիվ գործողությունները և ռուսների առաջացումը հարկադրում են քրդերին «կամավոր» հրաժարվել հայ գերիներից: Նրանց հոսքը գնալով ավելանում է: Արդեն սկսում են Մուշ գալ Սասունից և այլ վայրերից օրական 30–60 հոգի[43]:

Ըստ մոտավոր տեղեկությունների՝ ռուսական բանակի թիկունքում գտնվում էին մոտ 25 հազար քրդեր: Ռուսական հրամանատարությունը, չունենալով անհրաժեշտ քանակությամբ ուժեր և ժամանակ, չէր կարողանում լրացուցիչ զորամասեր տրամադրել թիկունքը քրդերի հարձակումներից պաշտպանելու համար: Նշված 25 հազար քրդերից տասից տասներկու

---

[37] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 67:*
[38] *«Համբավաբեր», 5. VI. 1916:*
[39] *Կ. Ս ա ս ո ւ ն ի. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 128:*
[40] *ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 7, թ. 73 շրջ.:*
[41] *«Համբավաբեր», 29. V. 1916, էջ 688:*
[42] *ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 153, թ. 6:*
[43] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 74:*

հազարը կազմում էին զինյալները[44], որոնք անընդհատ հարձակումներով կազմալուծում էին բանակի կանոնավոր մատակարարումը: Ա. Աթանասյանն իր զարմանքն է հայտնում, որ ռուսական հրամանատարությունը, որն այդքան վնաս է կրում քրդերի հարձակումներից, հովանավորում է քրդերին՝ նրանց համարելով դաշնակիցներ: Հիրավի ապշեցուցիչ է նման □ոչ հիշաչար□ վերաբերմունքը: Ավելին, ռուսական հրամանատարությունը արգելում է հայերին զենք կրել[45]:

Մարտի սկզբներին Մուշ վերադառնալու ցանկություն են հայտնում 130 մշեցիներ, որոնք ապաստանել էին Կովկասում[46]: ԿՀԲԸ կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն նրանց տրամադրում է հինգ հազար ռուբլի: Գումարը նախատեսված էր ճանապարհի և հագուստի գնման համար[47]:

ԿՀԲԸ Հայկական կենտրոնական կոմիտեի Խնուսի լիազոր Գր. Ղամարյանը և իր աշխատակիցները կատարում են քաղաքի և շրջակա գյուղերի վիճակագրությունը, պարզում ստացված վնասներն ու կորուստների հետևյալ պատկերը[48].

Գյուղերի անունները	Տան թիվը	Անձ	Տղամարդ	Կին	Երեխա	Ցանքս	Տավար	Ձի	Էշ	Ոչխար
Խնուս-բերդաքաղաք	78	417	61	155	201	-	96	16	21	54
Սայլու	13	50	11	13	26	43 կ[ոտ]	21	7	1	30
Արոս	33	139	37	39	63	47	80	6	3	11
Մժնկերտ	11	45	11	13	21	23	37	6	1	43
Քաղկիկ	8	47	12	14	21	17	22	3	4	-
Էլպիս	15	79	17	25	37	23	51	6	5	10
Հարամիկ	8	26	9	12	5	6	12	3	-	-
Մարուֆ	7	35	11	13	11	16	8	1	2	4
Խալ-Հաուշ*	51	293	70	77	146	51	110	7	10	62
Ենիքյոյ	21	116	23	36	57	-	17	2	2	4
Գասպարի գյուղ	13	79	15	21	43	41	13	-	-	-

[44] ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 12:
[45] Նույն տեղում, թ. 12 շրջ.:
[46] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 65:
[47] Նույն տեղում, ֆ. 227, ց. 1, գ. 470, թ. 1:
[48] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 51-52: Աստղանիշով նշված գյուղերը բացակայում են Խնուս գավառի վիճակագրությունից, որը ներկայացրել է Կ. Սասունին: Տե՛ս Կ. Ս ա ս ո ւ ն ի. Պատմություն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1957, էջ 364-365:

Չեվիրմե	36	142	42	47	53	294	103	9	4	19
Խոզլու	27	90	28	28	34	152	68	6	2	2
Խլաթ*	25	179	44	49	80	409	98	16	11	23
Շաբաղին	7	20	8	8	4	21	10	2	2	3
Դուման	5	43	13	11	19	64	21	1	-	19
Թոփրա-դալա*	7	50	16	14	20	-	8	-	1	-
Յոնջալու*	20	114	24	33	57	-	17	1	4	3
Դատա-վերան*	49	276	60	63	133	-	88	4	7	28
Ղարաբու-բաղ	22	134	42	39	53	25	24	3	16	-
Խարխարս*	26	98	25	24	49	5	32	4	2	-
Բուռհան*	13	74	16	22	36	15	23	3	-	-
Բուռնազ*	11	68	21	23	24	27	29	3	2	4
Գևանդուկ	29	95	39	32	24	8	42	18	6	11
Ղարաչո-բան	27	123	61	35	27	37	92	23	5	16
Եա-եա	5	38	12	12	14	20	20	3	1	-
Եայի Գոմեր*	4	30	9	8	13	40	10	2	-	-
ընդամենը	576	2894	737	886	1271					

Ինքնին հասկանալի է, որ լիազորի վկայակոչած այս տեղեկություններն ամբողջական չեն:

1916 թ. մայիսի 20-ին կազմած զեկուցագրում ԿՀԲԸ կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի Մուշի լիազոր Կ. Սասունին ներկայացնում է բնակչության մոտավոր վիճակագրությունը.

1. Խութ, Բռնաշեն և Մոտկան	*3071 հոգի*
2. Սասուն	*1596 հոգի*
4. Մուշ	*4506 հոգի*
5. Մշո դաշտ	*4205 հոգի*
Ընդամենը	*8711 հոգի*[49]*:*

Կ. Սասունին հայտնում է, որ օրական Մուշ են գալիս կոտորածներից փրկված 10–20 հոգի: Ժամանածներին տրվում է տաս օրվա ուտելիք և հագուստ: Զգալի թվով փախստականներ դեռ չեն ցուցակագրվել: Մոտավոր տվյալներով գաղթականների ընդհանուր թիվը հասնում է 9500-ի[50]*:*

Զեկուցագրում Կ. Սասունին նաև հետևյալ մանրամասնություններն է հաղորդում. «Սասունի բնակչության 80 տոկոսը երիտասարդ տղամարդիկ են, իսկ դաշտը (Մուշի – Ռ. Ս.*)՝ 50 տոկոս: Խութի և Բռնաշենի գաղթականությունը եկել է ամբողջ ընտանիքով, որոնց մեծամասնությունը՝ 70 տոկոսը կին և երեխա են»*[51]*:*

1916 թ. հունիսի 12-ին Մուշից ուղարկած զեկուցագրում Կ. Սասունին հայտնում է, որ մարտին գալով Մշո դաշտ, ականատես եղան բնակչության խուճապային տրամադրություններին: Նրանց շրջանում շարունակ շրջանառվում են լուրեր ռուսական բանակի հնարավոր նահանջի մասին: Դա էր պատճառը, որ ժողովրդի մի մասը, շտապ, չնչին գներով վաճառելով ունեցվածքը, 100-ական, 200-ական խմբերով հեռանում են Խնուս[52]*:*

Կ. Սասունին և նրա գործընկերների առաջին գործը լինում է բնակչության շրջանում հանգստություն հաստատել և վերջ տալ խուճապին, որ համակել էր գրեթե բոլորին: Ինչպես նշում է Կ. Սասունին, «...անմիջապես ժողովրդի մի խոշոր մասին տեղավորում ենք դաշտի գյուղերում, ուր դեռ մինչև այդ օրը ոչ մի բնակչություն չկար և պարենը անխնա վերաբերմունքից փչանում էր»[53]*:*

Սասունի, Դիարբեքիրի և այլ շրջաններից Մուշ են գալիս օրական 40–60 հայ: Նրանց թիվն ավելանում է կապված ռուսական բանակի առաջխաղացման հետ[54]*:*

Նշված քայլն անհրաժեշտ էր գաղթականության սննդի խնդիրը որոշ չափով ապահովելու տեսակետից: ԿՀԲԸ Մուշի աշխատակիցները հաշվի էին առել, որ նահանջի դեպքում տաս հազար գաղթականության ապահով վայր հասցնելու համար անհրաժեշտ է քսան օր, իսկ այդքան օրվա համար պետք էր նույնքան, այսինքն՝ տաս հազար փութ ալյուր[55]*:*

---

[49] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 60: «Համբավաբեր», 24. VII. 1916, էջ 953:*
[50] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 60:*
[51] *«Համբավաբեր», 24. VII. 1916, էջ 953:*
[52] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 57:*
[53] *Նույն տեղում:*
[54] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 67: □Համբավաբեր□, 2. IX. 1916, էջ 1258:*
[55] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 57:*

ԿՀԲԸ կից Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գր. Ղամարյանցի կազմած տեղեկագրի համաձայն, մինչև 1916 թ. հուլիսի սկիզբը Խնուսի սննդակայանը բաժանել է 4707 բաժին կերակուր: Իսկ հունիսի 8-ին բացվել է Դութախի սննդակայանը[56]:

1916 թ. հունիսի 12-ի զեկուցագրում Կ. Սասունին հայտնում է. «Ապրիլի 20-ին մենք կազմեցինք մի ընդհանուր վիճակագրություն, որի հիման վրա շարունակեցինք օգնություն հասցնել, բայց որովհետև ժողովրդի մի մասն անցավ Խնուս և ավելի հեռուները, մի մասը տեղավորվեց գյուղերում, և նոր եկողները շատացան, մենք հարկադրվեցինք կազմելու երկրորդ վիճակագրությունը մայիսի 20-ին, մի ամիս հետո առաջին վիճակագրությունից:

«Վիճակագրության արդյունքը.

3071 շունչ Խութ, Բռնաշեն, Մոտկան
1596 շունչ Սասուն
4144 շունչ Մուշ, Մշո դաշտ և Կենճ
Դասավորված են հետևյալ կերպով.
4506 շունչ Մշո քաղաքում
4205 շունչ Մշո դաշտում
Գումարը՝ 8711 շունչ»[57]:

Ալ. Խատիսյանին ուղղված հաղորդագրությունում Անդրանիկը տեղեկացնում է, որ Մուշում կենտրոնացել են 4500 մշեցի և սասունցի: Նրանց 3/4-ը որբեր են[58]: Միայն Կողբում կային տասը հազար մշեցի և սասունցի փախստական[59]:

Բնակչության հիմնական կենսական խնդիրները լուծելուց հետո, Կ. Սասունու խումբը ձեռնամուխ է լինում մոտ հազարի հասնող որբերի, այրի կանանց և հիվանդների Խնուս տեղափոխման աշխատանքներին[60]: Խնուսում և Արոս գյուղերում կազմակերպված սննդակայանները զգալի օժանդակություն են ցույց տալիս տեղափոխվողներին[61]:

Կ. Սասունին հայտնում է ԿՀԲԸ Կենտրոնական կոմիտեին, որ զբաղված լինելով բնակչությանը պարենով ապահովելով, հնարավորություն չեն ունեցել փոխադրել որբերին: 40 որբ փոխադրվել է Մոսկվայի հայկական կոմիտեի, երկրորդ անգամ՝ 130 հոգի Քաղաքների միության և երրորդ անգամ 164 որբ՝ Մոսկվայի հայկական կոմիտեի և Քաղաքների միության միջոցներով: Մուշի որբանոցում մնում են 30 երեխա[62]: Որբերի համար ստեղծվում են տանելի պայմաններ: Նրանց օրական տրվում է թեյ, ճաշ և հաց: Հետևում են հագուստի մաքրությանը և երեխաների սանիտարահիգիենիկ վիճակին:

---

[56] *«Համբավաբեր», 7. VIII. 1916, էջ 999:*
[57] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 60:*
[58] *«Հորիզոն», 17. IV. 1916: Մուշում գտնվող սասունցիների թիվը 1150 է: 60-ից ավելի զինված սասունցիներ մնում են լեռներում՝ պայքարելով քրդական զանազան խմբերի դեմ: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 7, թ. 73 շրջ.:*
[59] *«Վան-Տոսպ», 26. VI. 1916, էջ 14:*
[60] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 58:*
[61] *Նույն տեղում, թ. 50:*
[62] *Նույն տեղում, թ. 59:*

Որոնողական աշխատանքների հետևանքով հայտնաբերվում են 100 որբեր, որոնց նախատեսվում էր տեղափոխել Թիֆլիս[63]: Օրական Մուշ են գալիս ջարդերից փրկված կամ քրդերի գերությունից փախած տասից քսան հոգի: Իրականում, սակայն, վերադարձողների թիվն ավելի շատ էր: Նրանց մի մասը չի արձանագրվում: Կ. Սասունու գնահատմամբ, շրջանի բնակչության թվաքանակը հասնում է 9500-ի: Նոր ժամանողներին արձանագրում են հատուկ տետրում և ուղարկում Մուշի պարետին: Նորեկները ստանում են հագուստ և տասն օրվա պարեն[64]:

Ա. Աթանասյանի կարծիքով՝ ռուսական հրամանատարությունը կարող էր օգտագործել հայերի աշխատանքային ուժը, իհարկե համապատասխան վարձատրության դիմաց: Հայերը կարող էին Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի համար ապահովել 2,5 միլիոն փութ խոտ[65], որի կարիքն այդքան զգում է բանակը: Դա հնարավորություն կտար գաղթականներին վաստակել որոշ քանակությամբ գումար, որը կօգներ նրանց գոյատևմանը:

Կ. Սասունու համոզմամբ՝ դաշտի բնակչությունը շատ արագ կազմակերպվում և նույն արագությամբ սկսում է վերականգնել հարազատ օջախները և վերսկսում գյուղատնտեսական աշխատանքները: Դա թույլ է տալիս պարենով ապահովել ոչ միայն Մուշի գաղթականությանը, այլև ռուսական զորամասերին[66]:

Ինչպես նշում է Կ. Սասունին, սասունցիների շրջանում ուժեղ է միմյանց օգնելու զգացմունքը: Նորեկ սասունցիներն անմիջապես ստանում էին ավելի վաղ եկածների օժանդակությունը՝ պարեն, անկողին և այլն: «Այդ մի բուռ ժողովուրդը այս երկու տարվա արհավիրքների ընթացքում, ապաստանելով յուր լեռներում, յուր գոյությունը պահպանել է իրարու ձեռքը ամուր բռնելով և անցել է ավելի մեծ փորձություն և փոթորիկ, քան ներկայումս: Այսօր նա դարձյալ հետևում է յուր ավանդական սովորության»[67]: Կ. Սասունին հայտնում է, որ կյանքը, չնայած դժվարություններին, աստիճանաբար իր հունի մեջ է մտնում: Նա ուրախությամբ տեղեկացնում է, որ մարդիկ ամուսնանում և նոր ընտանիքներ են կազմում: Երիտասարդ կանանց 95 տոկոսը ամուսնացել է: Նրա վկայությամբ՝ «Առաջ ընտանեկան կյանքը ներկայացնում էր մի քառս, ուղղակի մի անարխիա էր տիրում...»[68]:

Բավական լավ հարաբերություններ են հաստատվում հայերի և տեղի ռուսական հրամանատարության հետ: Հայերը ոչ միայն պարենով էին օժանդակում ռուսներին, այլև հետախուզում էին հակառակորդի դիրքերը: Լինելով տեղացիներ, հայերը կարողանում էին ամենայն մանրամասնությամբ հետախուզել տեղանքը և արժեքավոր տեղեկություններ հայթայթել ռուսների համար: Կազմվել էր մարտական հատուկ խումբ, որի մեծամասնությունը սասունցիներ էին:

---

[63] *«Գաղափար» (Թիֆլիս), 27. V. 1916:*
[64] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 60:*
[65] *ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 6, թ. 12 շրջ.:*
[66] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 58:*
[67] *Նույն տեղում, թ. 61:*
[68] *Նույն տեղում, թ. 61:*

Հունիսի 12-ի իր զեկուցագրում Կ. Սասունին հայտնում է, որ տարբեր ժամանակներում ստացել է տասնչորս հազար ռուբլի, որը խիստ անբավարար է գաղթականներին օժանդակելու համար: Ինչպես նա է գրում, «Բացի այդ գումարներից դիմում եմ զանազան փոխառությունների և գործը տանում եմ: Ժողովրդի կարիքը այնքան շատ էր և նպաստավոր բոպեն այնքան կարճ, որ ես ստիպված էի քիչ ժամանակվա մեջ մեծ ծախքեր անել և եթե ունենայի իմ տրամադրության տակ շատ ավելին՝ կանեի ... հիմա մոտս մնում է 1492 բուբլի»[69]:

Կ. Սասունին անհրաժեշտ է համարում Իգդիր–Խնուս ճանապարհի վրա հիմնել ալյուրի և այլ պարենի պահեստներ: Նա խնդրում է ուղարկել իշխանությունների կողմից վավերացված փաստաթղթեր, որոնք հնարավորություն կտան իրեն գործել ռուսների կողմից գրավված նոր շրջաններում[70]:

Իր հերթին Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գր. Ղամարյանը և փոքրաթիվ գործընկերները միջոցներ են ձեռնարկում Խնուսի գյուղերում երկրագործական աշխատաքները կանոնավոր կատարելու համար: Եվ ինչպես հայտնում է լիազորը, «Այս շրջանի ժողովրդի արնաքամ մնացորդներն ազատվելով, զանազան տեղերից եկել, հավաքվել են իրենց գյուղերը և զարմանալի տոկունությամբ շարունակվող վտանգն առ ոչինչ համարելով, կարողացել են հայրենական օջախը վառ պահել»: Այնուամենայնիվ, բնակչությունը քայլ առ քայլ սկսում է վերականգնողական և գյուղատնտեսական աշխատանքները[71]:

Գ. Ղամարյանի կարծիքով՝ հիմնական օգնությունը պետք է ցուցաբերվի 1916 թ. ընթացքում, որպեսզի հաջորդ տարի՝ 1917 թ. □կարողանա առանց դրսի օգնության զարգացնել յուր տնտեսությունը»[72]:

Բնակչության շրջանում տարածվում է ռուսական զորքի հնարավոր նահանջի մասին լուրը: Դա խուճապ և փախուստի տրամադրություն է առաջացնում: Մարդիկ չնչին գներով վաճառելով ունեցվածքը, շտապում են Խնուս: Կ. Սասունին և ընկերները զգալի աշխատանք են կատարում բնակիչներին հանգստացնելու և Մուշ ու շրջակա գյուղեր վերադարձնելու համար[73]:

1916 թ. հուլիսի հեռագրում Կ. Սասունին տագնապով հայտնում է, որ հացահատիկի բերքը սակավ է և անբավարար բնակչությանն ապահովելու համար: Անհրաժեշտ է շտապ ներկրել ցորեն: Հակառակ դեպքում □Փախստականների մեծ մասը ներկայումս ենթակա է սովի□[74]:

Հայկական կենտրոնական կոմիտեն Խֆուս–Մուշ է ուղարկում երեք վագոն հագուստ, 300 փութ շաքար, թեյ, բրինձ և այլն[75]: Բեռները

---

[69] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 63:*
[70] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 64:*
[71] *Նույն տեղում, թ. 51:*
[72] *Նույն տեղում, թ. 52:*
[73] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 57:*
[74] *«Համբավաբեր», 24. VII. 1916, էջ 941:*
[75] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 51:*

երկաթուղով ուղարկվում են մինչև Սարիղամիշի կայարան, իսկ այնտեղից էլ սայլերով հասցնում են նշանակման վայրը:

Հուլիսի 20-ին ռուսական հրամանատարությունը նախաձեռնում է հարձակում, որը նպատակ ուներ գրավել Անդոկը, ապա իջնել Տիգրիսի հունով և առաջանալ Դիարբեքիր (Տիգրանակերտ): Հաջողության դեպքում նրանց աջակցելու էր Բիթլիսի ջոկատը, որը հարձակվելու էր դեպի Սղերդ:

Իր գործողություններում ռուսական հրամանատարությունը շարունակում էր լայնորեն օգտվել սասունցիներից կազմված խուզարկու խմբերի ծառայությունից: Նրանցում ընդգրկված էին երեք հարյուր հոգի: Մարտիկները Սասունի լեռնաշղթայի վրա դիրքեր էին գրավել և միաժամանակ հետախուզում էին հակառակորդի տեղաշարժը և դիրքերը: Հուլիսից սկսած սասունցիների մարտական խմբերը կռիվներ են մղում հակառակորդի դեմ, որի թվաքանակն օրեցօր աճում է: Ռուսական հրամանատարությունը շտապում է նրանց օգնություն հասցնել: Երկու օր անընդհատ ընթանում են կատաղի կռիվները: Հուլիսի 22-ին թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումները գրավում են Մշո դաշտի Ղըզըլաղաճ գյուղը՝ անցնելով ռուսական բանակի թիկունքը: Դա վտանգում է Մուշում և դաշտում գտնվողներին[76]:

Հուլիսի 23-ին Կ. Սասունին և ընկերները շտապում են համապատասխան հրահանգներ տալ բնակչությանը՝ համապատասխան իրերով պատրաստվել նահանջի: Քաղաքի բնակչության նահանջը սկսում է հուլիսի 23-ի գիշերը, իսկ դաշտի բնակչությանը՝ վաղ առավոտյան[77]: Մուշում ռուսական զորքից մնացել էր պարետը և մեկ տասնյակ զինվորներ: Նրանք ևս պատրաստվում էին հեռանալ Մուշից[78]: Լեռներից մարտիկների իջնելուց հետո հնարավոր է լինում մարտական խմբերը օգտագործել նահանջի ճանապարհը պաշտպանելու համար: Մուշից գաղթի ճանապարհը բռնում է հինգ հազար հոգի[79]: Քաղաքի բնակչությանն ուղարկելուց հետո, Կ. Սասունին և ութ ձիավորներով շտապում են Մուշից չորս վերստ գտնվող Մոկունք գյուղը[80], որտեղ գտնվում էր որբանոցը՝ երեխաներին ևս տարհանելու: Միաժամանակ Կ. Սասունին երկու ձիավոր սուրհանդակներ է ուղարկում դաշտի գյուղերը՝ շտապեցնելու բնակիչների նահանջը:

Հուլիսի 24-ի երեկոյան Կ. Սասունին և ութ ձիավորները վերադառնում են Մուշ, ստուգելու՝ արդյոք բոլորն են հեռացել քաղաքից: Կրկին երկու սուրհանդակներ է ուղարկում գյուղերը շտապեցնելու տարհանումը: Ինչպես գրում է Կ. Սասունին, «(Հուլիսի – Ռ. Ս.) 25-ի գիշերը տաճկական ռազվեդկան (հետախուզությունը – Ռ. Ս.) մտավ Մշո քաղաքի մի մասը և մենք ստիպվեցինք թողնել քաղաքը հուլիս 25-ի գիշերը ժամ 12-ին: Մեր սուրհանդակները 3 ժամ հետո դաշտից վերադառնում են մեզի լուր

---

[76] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 69:*
[77] *Նույն տեղում: ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 470, թ. 6-7:*
[78] *Կ. Ս ա ս ո ւ ն ի. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին..., էջ 131:*
[79] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 70:*
[80] *Կ. Ս ա ս ո ւ ն ի. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին..., էջ 132:*

տալու, որ դաշտը բնակիչներից պարպված է, և ահա բռնվում են տաճկական զորքի գնդակների: Մեր սուրհանդակները փախչում և ազատվում են...»[81]:

Հայկական կենտրոնական կոմիտեին ուղղված հեռագրում Կ. Սասունին հայտնում է. «Դեպի Բաշքյոյ ճանապարհվեցին 10000-ից ավելի գաղթական և 400 որբ[82]. խնդրում ենք կարգադրեցեք նրանց դիմավորելու և օգնություն ցույց տալու»[83]:

Շտապ կազմակերպվում է բնակչության հնարավորին անվտանգ նահանջը: Հուլիսի 26-ին նրանք հասնում են Խնուսի Արոս գյուղը: Ճանապարհին փախստականների մի մասը ենթարկվում է թուրքական զորքի հարձակմանը: Սպանվում են 22 հոգի[84]:

Խնուսում տեղի ունեցած ժողովում որոշվում է բնակչությանը տեղափոխել երկու ուղղությամբ. ա. ուղղությամբ անցնում են 3500 մինչև Բասենի Ղարաքիլիսա: Այստեղ նրանց մասին հոգում են Քաղաքների միության երեք սննդակայանները:

բ. ուղղությամբ, լեռնային ճանապարհով անցնում են 6500 հոգի, կրկին Ղարաքիլիսա:

Նահանջող բնակչությանն օժանդակելու նպատակով, լրացուցիչ սննդակայաններ են բացվում Չաուրմայում, Դոտավերանում և Քոչանայում: 10018 տարհանվողներին բաժանվում են 856 փութ ալյուր և 26 ֆունտ շաքար: Որպես մսացու տրվել է ինը եզ, յոթ կով, չորս ոչխար, չորս այծ և երեք ուլ[85]: Տարհանման ընթացքում, տարբեր հիվանդությունների հետևանքով որոշ թվով մարդիկ մահանում են[86]: Հաջողվում է անվնաս տեղափոխել 350 որբերի: Նրանցից 150-ին հանձնում են իրենց մայրերին, իսկ 200-ին ուղարկում են Կաղզվան[87]: Այստեղ հիմնվել էր նաև հիվանդանոց՝ ինֆեկցիոն բաժանմունքով[88]:

Ռուսական զորքերի կողմից հակառակորդին ետ մղելուց հետո, սեպտեմբերի 23-ին Կ. Սասունին կրկին վերադառնում է Մուշ[89]: Համո Մակարյանի և Արմեն Սասունու հետ Մուշում և Խնուսում հիմնելու էր մթերքի պահեստներ[90]:

Ինչպես իր հուշերում նշում է Կ. Սասունին, «Այս նահանջեն հետո, գրավված Հայաստանը այլևս մասնակի նահանջներու ենթակա չեղավ: Ժողովուրդը կամաց-կամաց տեղավորվեցավ, մնայու ն բնակիչի հանգամանք

---

[81] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 70:*

[82] *Իր հուշերում Կ. Սասունին նշում է, որ որբերի թիվը 500 էր: Տե՛ս Կ. Սասունի. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին..., էջ 133:*

[83] *«Համբավաբեր», 7. VIII. 1916, էջ 1005:*

[84] *Նույն տեղում, 2. IX. 1916, էջ 1258:*

[85] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 71:*

[86] *Նույն տեղում, թ. 77:*

[87] *Նույն տեղում, թ. 72:*

[88] *Ա. Հ. Հարությունյան. Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում Մեծ եղեռնի տարիներին, թիվ Դ, «Էջմիածին», 2007, էջ 77:*

[89] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 37:*

[90] *«Աշխատանք» (Երևան), 28.IX.1916:*

ստացավ, իր սեփական աշխատանքով և վարուցանքով ապրելու կյանքի մեջ մտավ»[91]:

Շարունակվում են գերված կամ պատանդ պահված հայերի ազատումը քրդական գերությունից: Այդ խնդրում զգալի օգնություն են ցույց տալիս բալակցի, մոտկանցի և հատկապես Շեկոյի տան քրդերը: Նրանց միջոցով հաջողվում է փրկել զգալի թվով հայերի: Ցավոք, նման դեպքերը բավականին քիչ էին: Քրդերի ճնշող մեծամասնությունը մասնակցեց հայերի բռնագաղթին և զանգվածային կոտորածներին:

Գեներալ Ֆ. Նազարբեկովի վկայությամբ՝ ռուսական զորքերը մի քանի անգամ պատժիչ արշավախմբեր են կազմակերպում քրդական անկանոն ջոկատների դեմ: Քրդական գյուղերում նրանք հիմնականում գտնում էին միայն ծերունիների, հիվանդների, հայ կանանց ու երեխաների[92]:

Կրկին Մուշ և շրջակա բնակավայրերն են վերադառնում փախստականները: Հոկտեմբերի դրությամբ այնտեղ բնակվում էր մոտ հինգ հազար հոգի[93]:

Կ. Սասունու կարծիքով, Մուշ–Խնուս շրջանը առավել սուր կարիք ունի պետական նպաստի, որն արդեն ութ ամիս է ինչ չի ստացվել: Շրջանում գրեթե հաց և այլուր գոյություն չունի: Անհրաժեշտ է գարնանացանի համար սերմացու: Բացի այդ, պետք է հիմնել որբանոց[94]:

Հայ հասարակական-քաղաքական և հոգևոր շրջանակների ջանքերը ուղղված էին ռուսական զորքերի կողմից գրավված տարածքները վերադարձնել հրաշքով փրկված հայերին, քանի որ ստույգ տեղեկություններ կային, որ ռուսական իշխանությունները ցանկանում էին Արևմտյան Հայաստանը վերաբնակեցնել ռուս վերաբնակիչներով: Այդ մասին բացահայտ խոսվում է ռուսական Պետական դումայում: Նոր տարածքների գաղութացման համար կազմակերպվում են այսպես կոչված անզեն կամ բանվորական դրուժինաներ: Նրանցից յուրաքանչյուրում ընդգրկվածների թվաքանակը հասնում էր մոտ հազար հոգու: Այդ դրուժինաները սկսել են գործել դեռևս 1915 թ. աշնանից: Նրանք պետք է մշակեին հողատարածությունները, նախապատրաստեին հողատարածությունները և մթերքով ապահովեին ապագա վերաբնակիչներին:

1916 թ. գարնանից Արևմտյան Հայաստանում գործում էին այդպիսի հինգ դրուժինա: Կադետական պաշտոնաթերթ «Ռեչը» գրում է. «Նրանց (բանվորական գումարտակների – Ռ. Ս.) անմիջական գործը լինելու է հողամասերի նախապատրաստումը և ապա այդ հողամասերի մշակումը կովկասյան բանակի պարենավորումը ապահովելու համար … խումբերի մեջ, իբրև ընդհանուր կանոն, չկան ոչ հայեր, ոչ վրացիներ»[95]: Թերթը կասկածելի է համարում նշված ստորաբաժանումներում բացառապես ռուս ազգությանը պատկանող անձանց ընդգրկումը: Կովկասի փոխարքա, Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Ն. Նիկոլաևի հրամանով, թույլատրվեց

---

[91] *Կ. Ս ա ս ո ւ ն ի. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին..., էջ 134:*
[92] *ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 11, թ. 17 շրջ.:*
[93] *«Համբավաբեր», 2. X. 1916, էջ 1258:*
[94] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 37:*
[95] *«Վան-Տոսպ», 7. VIII. 1916, էջ 7:*

գրավված հողերը կապալով տալ ցանկացողներին: Իսկ Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Ն. Յուդենիչի հրամանով Ալաշկերտի, Բայազետի և Դիադինի հովիտներում կարող են բնակվել միայն ռուս վերաբնակիչները և կազակները[96]:

1916 թ. մարտի 1-ին ելույթ ունենալով Պետական դումայում, Պ. Միլյուկովն ուղղակի մեղադրում է կառավարությանը քրդերին բացահայտ հովանավորելու և հայ բնակչության օրինական շահերը ոտնահարելու համար: Նա հետևյալն է ասել. □Ինչ-որ դրդումներից՝ մենք պատրաստ ենք հովանավորել անուղղելի թափառական քրդին և նրան երկրագործ դարձնել՝ ի հաշիվ հինավուրց զոհի՝ հողագործ հայերի□[97]:

1916 թ. դեկտեմբերի 1-ին Հայկական Կենտրոնական կոմիտեի ներկայացրած իր զեկուցագիր-հաշվետվությունում Կ. Սասունին հայտնում է, որ հուլիսի 23-ի նահանջից հետո վերադառնալով Խնուս և Մուշ, բնակչությանը հացով ապահովելու համար ձեռնարկվում են մի շարք անհրաժեշտ միջոցառումներ: Առաջին հերթին կատարել է բնակչության հաշվառում, որի արդյունքը հետևյալն էր.

«ա) Խնուսի շրջանում	*3343 (հոգի)*
բ) Կումկումի շրջանում	*600 (հոգի)*
գ) Մուշի շրջանից և նոր ազատվողներ	*1000 (հոգի)*
(Ընդամենը)	*4943 (հոգի)»[98]:*

Այդպիսով՝ ռուսական զորքերի հուլիս 23-ի հերթական նահանջից հետո Կարո Սասունու իրականացրած նոր հաշվառումը ցույց է տալիս, որ 1916 թ. մայիսի 20-ին իր արձանագրած փրկվածների մոտ կեսը այլևս հայրենի բնակավայրեր չի վերադարձել:

Մուշ-Խնուս շրջանի բնակչությունը գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ: Կ. Սասունին մարդկանց առաջարկում է ինքնարժեքով գնել 550 փութ ցորենը: Բացի այդ, բնակչությունից կազմում է գումակ, բաղկացած 150 սայլից, որով պետք է փոխադրեին ալյուրը, փութը չորս ռուբլով:

Ռազմաճակատում իրադրությունը փոքր ինչ կայունանալուց հետո, հայկական կազմակերպությունները, հիմնականում ԿՀԲԸ, վերսկսում են իրենց գործունեությունը: Այստեղ է գալիս Կարո Սասունին: 1917 թ. հունվարի 27-ին, նա լինելով Խնուս-Մուշ շրջանի լիազոր, խնդրում ԿՀԲԸ Կենտրոնական կոմիտեին ուղարկել հետևյալ գումարները.

1. Ջոկատի՝ հունվար-փետրվար ամիսների գործունեության համար տրամադրել 1435 ռուբլի 73 կոպեկ:

2. Ջոկատի անդամների հունվար-փետրվար ամիսների աշխատավարձը՝ 2600 ռուբլի:

---

[96] *Նույն տեղում:*

[97] *«Համբավաբեր», 27. IV. 1916, էջ 422:*

[98] *□Համբավաբեր□, 11. X. 1916, էջ 1577:*

3. Ջոկատի հունվար-փետրվար ամիսների ծառաների, ձիերի և ներկայացուցչական ծախսերի համար 1000 ռուբլի:

4. Հունվար-փետրվար ամիսներին գաղթականների օգնության համար 500 ռուբլի:

5. Մուշի սննդակայանի համար յուրաքանչյուր ամիսը հատկացնել 1200 ռուբլի, այսինքն՝ 3600 ռուբլի (Կ. Սասունու նշած գումարը մերժվել է և հատկացվել է 2400 ռուբլի):

6. Խնուսի որբանոցի 50 երեխաների համար՝ հուվար-փետրվար ամիսների համար 2000 ռուբլի (պահանջված գումարի դիմաց արվել է ուղղում և նշվել է 1000 ռուբլի):

7. Հարամիկի որբանոցի 50 որբերի համար հունվար-փետրվար ամիսների համար անհրաժեշտ է 1000 ռուբլի:

Պահանջվում է 12135 ռուբլի 73 կոպեկ: Գումարը, կատարված ուղղումներից հետո կազմել է 8500 ռուբլի[99]:

Նշված ժամանակ Մուշում գործում էր միայն ԿՀԲԸ Հայկական Կենտրոնական կոմիտե, այլ կազմակերպություններ և ընկերություններ այնտեղ չկային:

Վերադարձողների համար կազմակերպվում է սննդակայան: 1916 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին այստեղ սնունդ են ստանում երկու հազար հոգի[100]: Այդ նպատակի համար ծախսվում է 1801 ռուբլի 76 կոպեկ գումար[101]:

1917 թ. մարտի 2-ի զեկուցագրում Կ. Սասունին հայտնում է, որ 8500 ռուբլին ստացել է: Նա տեղեկացնում է, որ Մուշի սննդակայանի և Խնուսի երկու որբանոցների համար յուրաքանչյուր ամիս անհրաժեշտ է 400 փութ ալյուր ուղարկել[102]:

Ռուսական կառավարության կողմից տրամադրված գումարները անբավարար էին սննդակայանի գործունեության համար: Այսպես, 1916 թ. նոյեմբեր-դեկտեմբերին հատկացվել է 1200 ռուբլի, որը «նոր ազատվողների համար մի բարիք էր»[103]:

Կ. Սասունին նոյեմբերին, Խնուսում, հիմնում է որբանոց: Վերջինիս նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների և կահավորման համար հատկացվում է համապատասխանաբար 2100 և 1800 ռուբլի: Սկզբնական շրջանում որբերի սննդի խնդիրը հոգացել են ԿՀԲԸ - Մուշի և Խնուսի ու Քաղաքների միության սննդակայաններից[104]:

Որբանոցը կանոնավոր կերպով սկսում է գործել 1917 թ. հունվարից: Որբերի թվաքանակը հիսուն էր[105]: Սկզբնապես նախատեսվում էր որբերի թիվը հասցնել հարյուրի, սակայն համապատասխան մեծությամբ շինության բացակայությունը հնարավորություն չի տալիս իրականացնել

---

[99] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 1-2:*
[100] *Նույն տեղում, թ. 14:*
[101] *Նույն տեղում:*
[102] *Նույն տեղում, թ. 13 և շրջ.:*
[103] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 126, թ. 20:*
[104] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 14:*
[105] *Նույն տեղում, թ. 14 շրջ.:*

մտահղացումը[106]: Ուստի, Հարամիկ գյուղում հիմնվում է երկրորդ որբանոցը, որտեղ ապաստանելու էր 50 որբ[107]:

Իր հաշվետվությունում Կ. Սասունին հպարտությամբ գրում է. «(Որբերը – Ռ. Ս.) կանոնավոր հագնված են, ունեն իրենց առանձին մահճակալներ (որ տեղում շինել տվինք 4-րդ կորպուսի շինարարական ճյուղին) և զատ զատ բոլոր իրերը: Շենքը վերանորոգել ենք և ներկայացնում է շատ մեծ հարմարություններ, մաքրության և կանոնավորության տեսակետից, եթե ոչ գերազանցել՝ գոնե կը մրցի Կովկասի բոլոր որբանոցների հետ»[108]: Նրա կառավարչուհին էր օր. Մեծատուրյանը: Նա միաժամանակ դասավանդում է զանազան առարկաներ:

Որբանոցն ուներ ընդարձակ հողատարածություններ, որը նախատեսվում է մշակել 1917 թ., գարնանից: Դա հնարավորություն կտա որբանոցը կես տարով ապահովել սննդով[109]:

Խնուսի որբանոցին կից հիմնվում է դպրոց, ուր բացի 50 որբերից սովորում են 28 երեխաներ, իսկ Հարամիկի դպրոցում ուսանում են բոլոր որբերը, որոնք 1917 թ. հունվարի դրությամբ 48 էր: Նշված դպրոցներում դասավանդում են մեկական ուսուցիչ[110]:

Կ. Սասունին միաժամանակ հայտնում է. «Սարսափելի աղքատություն է տիրում, անհրաժեշտ է 1500 երեխայի, 2000 կանացի ու 1500 տղամարդու, թե ներքին և թե արտաքին շորեր»[111]:

1916 թ. դեկտեմբերի 1-ին Կ. Սասունին Թիֆլիսում ներկայացնում մանրամասն զեկուցագիր հայ փախստականների և գերությունից ազատվածների մասին: Նա հայտնում է, որ սեպտեմբերին խումբը մեկնում է Խֆուս–Մուշ: Նրանց հանձնարարված էր. 1. սննդամթերքի պահեստ հիմնել Խնուսում, 2, պարեն հասցնել Մուշում գտնվողներին և նոր եկողներին, 3. որոնել, հավաքել, խնամել և տեղափոխել որբ երեխաներին, 4. նախապատրաստել սերմացու:

Իր ենթակայության ներքո գտնվող աշխատակիցներին բաժանում է երկու խմբի: Մի խումբն ուղարկում է Խնուս, իսկ երկրորդը՝ Մուշ, որպեսզի տեղերում կազմակերպեն վերը նշված աշխատանքները[112]:

Առաջին հերթին կազմակերպվում է ալյուրի փոխադրումը: Բնակչությունից հավաքված 150 սայլերով Սարիղամիշից ալյուրը պետք է փոխադրվեր Խնուս՝ փութը չորս ռուբլով: Սակայն Սարիղամիշ դեռևս ալյուրը չէր բերվել, ուստի պարապուրդ չտալու համար փոխադրվում է Քաղաքների միության 1500 փութ ալյուր և այլ բեռներ: Հնարավոր է լինում սեփական կարիքների համար տեղափոխել միայն 400 փութ ալյուր, շաքար, ինչպես նաև որբանոցի համար պարեն[113]:

---

[106] *Նույն տեղում:*
[107] *Նույն տեղում:*
[108] *Նույն տեղում:*
[109] *Նույն տեղում:*
[110] *Նույն տեղում, թ. 15:*
[111] *Նույն տեղում, թ. 15 շրջ.:*
[112] *«Համբավաբեր», 11. XII. 1916, էջ 1577:*
[113] *Նույն տեղում:*

Խնուսի շրջանում հողագործական աշխատանքներ չեն կատարվել: Անհրաժեշտ է վաղ գարնանը սերմացու հասցնել, որպեսզի բարենպաստ եղանակային պայմաններում գյուղացին հնարավորություն ունենա սկսել երկրագործական աշխատանքները: Կ. Սասունին գրում. «Եթե այս գարնանը (1917 թ. – Ռ. Ս.) հնարավորություն չը լինի ցանքերը կազմակերպելու, կստեղծվի տնտեսական այնպիսի քայքայում, որը միայն երեք-չորս տարի հետո կը վերականգնվի: Մինչդեռ, եթե 5000 բնակչության, նվազագույն հաշվով 5000 փութ սերմացու ցորեն տանք, եկող տարվա օգոստոսից սկսած 8 ամիս ապահոված կը լինենք ամբողջ ազգաբնակչությունը»[114]:

Կ. Սասունին և աշխատակիցներն անց են կացնում մեկօրյա վիճակագրություն Խնուս–Մուշ շրջանի բնակիչների: Այսպես, Խնուսի շրջանում բնակվում էր 3343, Կումկումի՝ 600, Մուշի շրջանում՝ 100, ընդամենը՝ 4943 հոգի[115]:

Միաժամանակ խումբը ձեռնամուխ է եղել քրդերի մոտ գտնվող հայերի փրկագնմամբ: Այդ նպատակի համար Կ. Սասունուն տրվել էր 2500 ռուբլի:

60 սասունցիներ և մշեցիներ ցանկություն են հայտնում գալ Մուշ և զբաղվել պատանդների ազատման խնդրով: Նրանք լինելով տեղացիներ, գերազանց գիտեին տեղանքը և կարող էին լուրջ օգնություն ցույց տալ: Չնայած, որ չի տրամադրվում անհրաժեշտ դրամը (հնարավորություն կար միայն երկու հոգու ֆինանսավորել, այն էլ երկու ամսով), Մուշում գործում են մոտ հարյուր հոգի: Նրանցից 25 ձիավոր են: Իսկ Սիլվանի շրջանում գործում են 150 զինված երիտասարդների ջոկատը:

Վերը նշված խումբը, բացի լեռներում հայերին հայտնաբերելուց, կատարում է նաև հետախուզություն: Նրանց հայթայթած տեղեկությունների համաձայն, Մոտկանի և Խիզանի շրջանում կան մոտ հինգ հազար հայեր: Իսկ Խուլփի, Ֆարղինի, Հազրոյի և Սիլվանի դաշտում մոտ ութ հազար, որոնք բացառապես երիտասարդներ են[116]:

Հաջողվել է բարեկամական հարաբերություններ հաստատել մոտկանցի Մահմեդ աղայի հետ, որը բավական օգնություն է ցույց տալիս պատանդ հայերի գտնվելու վայրերը հայտնաբերելու և նրանց Մուշ բերելու գործում[117]:

Մինչև նոյեմբերի 10-ը գերությունից ազատվում են 380 հոգի, որոնց թիվը ամսվա վերջին հասնում է 630 հոգու: Քրդերը հայերին ազատում են յուրաքանչյուրի համար պահանջելով մեկ ոսկի[118]: Ընդհանուր գումարը հասնում է 200 օսմանյան ոսկու: Գումարն անհրաժեշտ էր շտապ հայթայթել, քանի որ ձմեռը հնարավոր չէ ազատվածներին տեղափոխել: Այդ գումարի դիմաց «քուրդ աղաները խոսք են տալիս ... պահելու մինչև գարուն իրենց մոտ գտնված հայերին»[119]:

---

[114] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 44:*
[115] *«Համբավաբեր», 11. XII. 1916, էջ 1577:*
[116] *Նույն տեղում:*
[117] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 41:*
[118] *«Համբավաբեր», 11. XII. 1916, էջ 1577:*
[119] *Նույն տեղում, էջ 1578:*

Իմերեթի և Վրաստանի հոգևոր առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը զգալի գումար՝ 10 հազար ռուբլի է տրամադրում քրդերի մոտ գերության մեջ գտնվող հայերին փրկագնելու համար: Նշված գումարի մի մասը տրվում է Կ. Սասունուն: Նրան հաջողվում է դրամով ազատել 43 հոգու[120]:

Վերը հիշատակած 150 զինված երիտասարդները, որոնք նույնիսկ տեղյակ չէին, որ Մուշում հայեր կան, կատաղի կռիվներ են մղում՝ թուրքերի և քրդերի դեմ տարածելով ահ ու սարսափ: Եվ ինչպես նշում է Կ. Սասունին, «Դրանց (150 հայերի – Ռ. Ս.) գոյությունը մի տեսակ դյուրություն է տալիս...լեռնանցքով անցնող փախստականներին»[121]:

Ալեքսանդրապոլ են հասնում 1300 սասունցիներ: Նրանց կեցության համար Հայկական կենտրոնական կոմիտեն հատկացնում է հինգ հազար ռուբլի, որը նվիրաբերել էր Հ. Թամամշյանը[122]:

Խնուսում գործում է մեկ, իսկ շրջանում՝ երկու դպրոց: Դրանցից յուրաքանչյուրում ուսանում են 50-ական աշակերտ: Դասավանդում են տեղացի ուսուցիչներ[123]:

1916 թ. հոկտեմբերի 20-ից Մուշում ընդունում, երկու օր հյուրընկալում և Խնուս են ուղարկում նոր եկած գաղթականներին կամ փախստականներին: Սակայն, քանի որ ԿՀԲԸ Հայկական կենտրոնական կոմիտեն չէր թույլատրել Մուշում սննդակայան հիմնել, նորեկներին ցույց տրվող օգնությունը սահմանափակ էր: Ի վերջո, ստանալով կենտրոնի թույլտվությունը, Մուշում սկսում է գործել սննդակայան: Շտապ կարգով Խնուսից այստեղ է տեղափոխվում ալյուր և այլ ուտելիք[124]:

Կ. Սասունին գտնում է, որ անհրաժեշտ է Խնուս հասցնել հինգ հազար փութ սերմացու, որի գնման և տեղափոխման համար անհրաժեշտ է 60 հազար ռուբլի: «Ամեն միջոց չի խնայել Խնուսի պահեստին հասցնելու մինչև հունվարի 15-ը ութ հազար փ. ալյուր»: Բացի այդ, հարկ էր կարգավորել հարաբերությունները նահանգապետի հետ, որպեսզի հնարավորություն լինի փոքր ի շատե ազատ գործել[125]:

1917 թ. փետրվարի 20-ին Կովկասի փոխարքայությունը Մուշ քաղաքի սննդակայանի գործունեության համար տրամադրում է 2400 ռուբլի[126]:

Հուսադրող էր իրավիճակը ռազմաճակատում: Կովկասյան բանակի հրամանատարությունն արագորեն ամրապնդում էր թիկունքը՝ կառուցվում էր նոր ճանապարհներ և երկաթգծեր: Միայն նորակառույց խճուղիների

---

[120] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 328, թ. 182: ՀՅԴ IX Ընդհանուր ժողովի դատական ատյանը լսում է մի շարք կուսակցականների ամբաստանությունները Կ. Սասունու վերաբերյալ, որոնք գլխավորապես կապված էին հայերի փրկագնման համար հատկացված գումարների հետ: 1919 թ. հոկտեմբերի 23-ին հարցաքննված մշեցի Տիգրան Գավառյանը հայտնում է, որ սկզբում քրդերը հայերին ազատում են առանց փրկագնի: Այդ աշխատանքները գլխավորապես կատարել է Սասունցի Մանուկը: Ընդհանուր առմամբ, 1916-1917 թթ. ազատվել են 1500-ից 2000 հոգի: 10 հոգու համար տրվել է մեկ ոսկի: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1451, ց. 1, գ. 153, թ. 67*

[121] *«Համբավաբեր», 11. XII. 1916, էջ 1578:*

[122] *«Համբավաբեր», 18. XII. 1916, էջ 1619:*

[123] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 43: «Համբավաբեր», 11. XII. 1916, էջ 1578:*

[124] *Նույն տեղում:*

[125] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 44-45:*

[126] *Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 126, թ. 16:*

երկարությունը հասնում էր երկու հազար կիլոմետրի: Նշված շինարարություններին հիմնականում մասնակցում էին արևմտահայեր, որոնք այդ կերպ կարողանում են որոշ գումար վաստակել: Մուշում և այլ վայրերում գտնվող հայության համար դա լավ նշան էր, քանի որ վկայում էր, որ իրադրությունը ռուս-թուրքական ռազմաճակատում կայուն է և այլևս ռուսական զորքը չի նահանջի[127]:

Ինչպես նշում է Կ. Սասունին, «1916-ի աշունը դարձավ մեզ համար տեղավորման և ցանքի շրջան մը, որ 1917-ի տարեշրջանին ավելի բարգավաճ վիճակի մը հասավ: Երկրի ամբողջ հայությունը հետզհետե ինքնաբավ կը դառնար»[128]:

Խնուս–Մուշի շրջանը բժշկական օգնությամբ ապահովելու նպատակով Քաղաքների միությունը կազմակերպում է հիվանդանոց: Վերջինիս տնօրենն էր բժիշկ Գարեգին Շահնազարյանը: Նա իր ենթակայության ներքո ուներ երկու բուժակ, գթության քույր, երկու սանիտար, երկու հիվանդապահի և այլ աշխատողներ[129]: Խնուսում, Սարիղամիշում, Մանազկերտում ու այլ վայրերում տեղակայված էին Քաղաքների միության այլ բաժանմունքները, ինչպես, օրինակ, պարենի պահեստ, սննդակայանները, թռուցիկ՝ շրջիկ ջոկատները, գումակը և այլն[130]:

ԿՀԲԸ նախագահ Ս. Հարությունյանը, պատասխանելով պատերազմի իրավունքով Թուրքիայից գրավված շրջանների գեներալ-նահանգապետի 1917թ. փետրվարի 16-ին գրությանը, ներկայացնում է Խնուսում գործող իր աշխատակիցների ցուցակը և զբաղեցրած պաշտոնը.

1. Կարո Սասունի՝ լիազոր,
2. Ա. Մարգարյան՝ պահեստի կառավարիչ,
3. Մ. Դարմանյան՝ շրջանի կառավարիչ,
4. Արմեն Սասունի՝ սննդակայանի կառավարիչ,
5. Ա. Մանուկյան՝ կառավարչի օգնական,
6. Հռիփսիմե Մեծատուրյան՝ որբանոցի կառավարիչ[131]:

1917 թ. մարտի 24-ին կառավարությունը ԿՀԲԸ-ն Հայկական կենտրոնական կոմիտեին փոխանցում է 24566 ռուբլի 43 կոպեկ՝ Խնուսի և Մուշի փախստականներին տարհանելու և ճանապարհին սննդակայաններ հիմնելու համար[132]: Ապրիլի 26-ին այդ գումարը կազմում է 2400 ռուբլի, այդ թվում նաև Ալաշկերտինը[133]:

Ռուսական իշխանությունների կողմից թույլատրվում է Բուլանըխ գավառի մոտ 400 ընտանիքների տեղափոխվել Ալաշկերտ՝ իրենց տնային կենդանիներով: Հայտնելով այդ մասին՝ Յ. Զավրիևը միաժամանակ նշում է, որ նրանք տեղում ապահովվելու են սերմացուով: Տեղափոխվողների

---

[127] *Կ. Սասունի. Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքի..., էջ 136:*
[128] *Նույն տեղում, էջ 137:*
[129] *ՀԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 69, թ. 23:*
[130] *Նույն տեղում, թ. 23-24:*
[131] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 188, թ. 10:*
[132] *ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 126, թ. 13:*
[133] *Նույն տեղում, թ. 7:*

սննդի հետ կապված խնդիրները հոգալու է Քաղաքների միությունը, ընդհուպ մինչև 1917 թ. հուլիսը[134]:

Հայկական կազմակերպությունները, սակայն, հնարավորություն չեն ունենում շարունակել իրենց աշխատանքները: Կովկասյան բանակի զորամասերը նահանջում են: Բնակչությունը հարկադրված է լինում հետևել ռուսական զորամասերին: 1917 թ. ապրիլի 19-ին թուրքական 2-րդ բանակային կորպուսի զորամասերը Մուստաֆա Քեմալի հրամանատարությամբ, առանց մարտի գրավում են Մուշը: Իսկ 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից և ռուս-թուրքական ռազմաճակատից ռուսական բանակի հեռանալուց հետո, 1918 թ. փետրվարին թուրքական զորքն անցնում է լայնածավալ հարձակման: Այդ ամենը հնարավորություն չեն տալիս շարունակել Մուշի և Խնուսի հայկական բնակավայրերի վերականգնողական աշխատանքները:

ОРГАНИЗАЦИЯ ПОМОЩИ ТАРОНСКИМ АРМЯНАМ ВО ВРЕМЯ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (1916–1917 гг.)

РУБЕН СААКЯН

Р е з ю м е

Во время Первой мировой войны правительство Османской Турции организовало геноцид армян. За два года войны – 1914–1915 гг. – большинство жителей Западной Армении, более 1,5 миллиона человек, были депортированы и убиты. После наступления русской Кавказской армии, когда большая часть территории Западной Армении была занята, армянские и русские общественные организации и русское правительство начали помогать армянским беженцам, которые стали возвращаться на свои родные земли. Одним из таких районов был г. Муш и окрестные армянские села. Из 93 армянских сел остались целыми только 17. По предварительным расчетам ущерб оценивался около 300 милионов рублей. В Мушской долине начали действовать следующие общественные и благотворительные организации–Центральный армянский комитет при Кавказском армянском благотворительном обществе, Тифлисское армянское сельскохозяйственное и кустарное общество, Кавказское отделение Всероссийского союза городов. В г. Муше остались в живых около 50 армянских и некоторое количество турецких семей. Одной из первоочередных задач благотворительных организаций было спасение армянских детей и женщин, которых насильно удерживали некоторые курдские племена. Они соглашались освободить армян только за выкуп. За одного армянина курды требовали одну золотую монету. Армяне сформировали боевые отряды, которые вступали в бой с курдами и освобождали армянских женщин и детей. Только с нача ла апреля по 15 апреля 1916 г . были освобождены 3270 человек. Из разных мест также из курдского плена было освобождено значительное количество армян и их число составило 8711 душ. Армянские боевые отряды также выполняли роль фронтовой разведки, добывая для русского командования ценные разведывательные

[134] *ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 12, թ. 53 և շրջ.:*

сведения. В г. Муш стали прибывать чудом уцелевшие от резни армяне, большинство из которых были женщины и дети. Организации, в частности Союз городов, открыли для них питательные пункты и больницу. Находящиеся в г. Муше и окрестных селах организации начали помогать крестьянам плугами, другим сельскохозяйственным инвентарем, выдавали крестьянам семена, чтобы они могли засеять поля. Было спасено значительное количество ценных рукописей, хранящихся в тайниках армянских монастырей и церквей. Намечалось в 1917 г. собрать богатый урожай хлеба. Однако, отступление Кавказской армии в апреле 1917 г. не дало возможности продолжать восстановительные работы в г. Муше и окрестных армянских селах. Население вынуждено было отступить вместе с русскими войсками.

ORGANIZATION OF HELP TO TARON ARMENIANS DURING WORLD WAR I (1916–1917)

RUBEN SAHAKYAN

S u m m a r y

During World War I the government of Ottoman Turkey organized the Genocide of Armenians. Within two years of the war (1914–1915) most of the population of Western Armenia, more than 1,5 million people – women, children and men – were deported and massacred. After the Russian Caucasian army had occupied most of the territory of Western Armenia, Armenian and Russian public organizations and the Russian government began helping the Armenian refugees who started to come back home. One of those regions was the city of Mush and surrounding Armenian villages. Only 17 of 93 villages remained intact. According to preliminary calculations the damage was estimated at 300 million roubles. The following public and relief organizations started to work in Mush Valley: Armenian Central Committee at the Caucasian Armenian Relief Society, Tiflis Armenian Agricultural and Handicraft Society, Caucasian Department of All-Russian Union of Cities. Nearly 50 Armenian families and a few Turkish ones were left alive in the city of Mush. One of primary tasks of the relief organizations was the salvation of Armenian women and children held captive by Kurd tribes. They only consented to free them at a ransom. One gold coin should be paid for one Armenian. The Armenians organized detachments which attacked the Kurds and saved the Armenian women and children. 3270 people were freed in the first half of April 1916 alone. The total number of Armenians liberated from Kurd and other captors amounted to 8711. The Armenian detachments were also engaged in battle reconnaissance. They procured valuable information for the Russian command. Armenian survivors – mostly women and children – were coming to Mush. The societies – the Union of Cities particularly – organized feeding stations and a hospital for them. The organizations in Mush and surrounding villages provided the peasants with ploughs and other agricultural implements. They gave them seeds to sow the fields. A considerable number of valuable manuscripts kept in hiding-places of Armenian monasteries and churches was saved. Rich harvest of wheat was expected for 1917. However, in April 1917 the retreat of the Caucasian army frustrated the restoration work in Mush and surrounding Armenian villages. The population had to follow the retreating Russian troops.